

ՄԱՄԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Աշխարհացրիւ մելգոնեանցիներ Մելգոնեան Կրթական Հաստատութեան փակումը կասեցնելու համար կը վարձեն Իրաւաբաններու խումբ մը

Մելգոնեան Կրթական Հաստատութեան (ՄԿՀ) նուիրեալ եւ մտախոռով շրջանաւարտներ, աշխարհի ամէն կողմերէն համախմբուելով՝ կազմած են «Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ» (Melkonian Alumni and Friends) ոչ-հասութաբեր կազմակերպութիւնը, որուն նպատակն է դէմ կենալ եւ կասեցնել ծրագրուած փակումը՝ Հայ մշակոյթի եւ դպրութեան դարբնոց Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան: Ազգային մեծ Բարերար Կարապետ Մելգոնեանի կողմէ 1921-ին Հայ Ազգին նուիրաբերուած Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը դաստիարակած եւ սնուցած է աւելի քան երեք սերունդներ, որոնք եղած են արհեստավարժներ եւ առաջնորդներ Սփիւռքի Հայ համայնքներէն ներս: ՄԿՀ-ն իւրայատուկ կրթական օճախ մըն է արտասահմանի հայութեան համար, ուր՝ Արեւմտեան չափանիշներով բարձրորակ ուսում կը ջամբուի տարբեր երկիրներէ եւ հասարակական միջավայրերէ յաճախող Հայ երկսեռ, բազմազան աշակերտական խումբերու: Իր դիրքով, ի Կիպրոս, ՄԿՀ-ն Հայ իրականութեան մէջ կը գտնուի այն ճամբաներու խաչմերուկին՝ որոնք Հայրենի Բնօրրանը կը կապեն Միջին Արեւելքի, Եւրոպայի, եւ Ամերիկաներու մէջ բնակող միլիոնաւոր հայերու հետ:

1925-ին Կարապետ Մելգոնեան իր ամբողջ հարստութիւնը վստահեցաւ տրամադրել ՀԲԸՄիութեան, որ այդ ատեն Զուիցերիա հաստատուած բարեսիրական կազմակերպութիւն մըն էր, այն բացայայտ ակընկալութեամբ որ ՀԲԸՄ-ը պիտի իրագործէր Հայ մատաղ սերունդներուն յաւիտենապէս բարձրորակ ուսում ջամբելու իր տեսլականը: Այս նպատակին համար ան կտակագրեց դրամական վիթխարի գումար մը որպէսզի Հաստատութիւնը ունենայ եկամուտի մնայուն եւ անսպառ աղբիւր: Այսօր ՄԿՀ-ի յարկին տակ ուսանողական կազմը կը բաղկանայ 200-է աւելի սան-սանուհիներէ որոնք ներգրաւուած են աշխարհի չորս ծագերէն: ՄԿՀ-ի կալուածը, որ ներկայիս միայն մէկ մասը կը կազմէ սկզբնական կտակին, մօտ 40 էյքըր տարածութեամբ խիստ թանկարժէք հողամաս մըն է Նիկոսիոյ մէջ:

ՀԲԸՄ-ը իր կեդրոնատեղին վաղուց արդէն փոխադրած է Նիւ Եորք:

Կեդրոնական Վարչութիւնը վերջերս վճռած է փակել «Մելգոնեան»ը 2005-ի ուսումնական տարեշրջանի աւարտին: Աշխարհացրի Մելգոնեանցիներ այժմ միացած՝ բուռն կերպով կ'ընդդիմանան Հաստատութիւնը փակելու եւ կալուածները լուծարքի ենդարկելու որեւէ միջոցառման դէմ, քանի որ կը հաւատան թէ այդպիսի որեւէ արարք ՀԲԸՄ-ի կողմէ խախտում պիտի ըլլայ այն վստահութեան եւ մտադրութեան որ Բարերար Կարապետ Մելգոնեան կը տածէր ՀԲԸՄ-ի հանդէպ երբ իր ամբողջ ժառանգութիւնը կը յանձնէր այդ Միութեան խնամակալութեան: Մինչեւ հիմայ, Հաստատութիւնը պահպանելու մասին հանրութեան եւ անհատներու բոլոր կոչերը անտեսուած են ՀԲԸՄ-ի կողմէ: «Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ» կազմակերպութիւնը վարձած է Լոս Անջելըսի մէջ MacCarley & Rosen, PLC, իրաւաբանական ընկերութիւնը, որպէսզի իրաւական գետնի վրայ հետապնդէ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը գալիք սերունդներուն համար բաց պահելու անհրաժեշտութիւնը:

Մելգոնեան Սանուցը այսու օժանդակութեան հրաւեր կը կարդայ Հաստատութեան շրջանաւարտներուն, համայն հայութեան, նաև բոլոր անոնց՝ որոնք շահագրգիռ են Հայ մշակոյթի եւ տոհմիկ Հայեցի դաստիարակութեան պահպանմամբ: Մելգոնեան Սանուցի հետ կարելի է կապուիլ հետեւեալ ե-նամակի հասցէով.-
coordinator@melkonianforever.org

MacCarley & Rosen, PLC
Glendale, California
Օգոստոս, 31, 2004.

